

ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԽՄԱՐՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԱՆՑՄԱՆ ՄՈԴԵԼԻ ԿԱՅԱՑՄԱՆ ԳՐԱՎԱԿԱՆ

Մարիամ Մարգարյան

Ժողովրդավարության համախմբումը վերաբերում է քաղաքական զարգացման ամբողջ գործընթացին, ներկայացուցչական ժողովրդավարության հաստատման մրցակցության կանոններին՝ քաղաքական ուժերի փոխհարաբերությունների, քաղաքական մշակույթի կերպափոխմանը բնորոշ առանձնահատկություններին և օրինաչափություններին: Հողվածում ուսումնասիրվում է ժողովրդավարական անցման մոդելի բազմաչափությունը որպես քաղաքական զարգացման գործընթաց, որը տեղի է ունենում ժողովրդավարացման երրորդ ալիքում ներգրավված երկրներում, կարևորվում է ժողովրդավարության համախմբումը՝ որպես ժողովրդավարական անցման մոդելի կայացման գրավական:

Ժողովրդավարության համախմբումը կառավարման մենիշխանական ձևից ժողովրդավարականին անցնելու վճռորոշ փուլն է: Այն սկսվում է նախորդ վարչակարգի հետ վճռական խզումից հետո, երբ նոր ժողովրդավարությունները զարգանում են իրենց սեփական հիմքի վրա, ինչը թույլ է տալիս նրանց, տնտեսական, սոցիալական և մշակութազաղափարախոսական բնագավառում անսպասելի առաջացած ճգնաժամերի դեպքում, հնարավորինս կայուն զարգացում պահպանել: Այս առումով ժողովրդավարության համախմբումը նոր քաղաքական հարաբերությունների հիմնավորման գործընթաց է՝ ոչ միայն դրա արժեքների ու նորմերի սուբյեկտիվ ընդունման, այլև ժողովրդավարական ինստիտուտների հետագա գործառնության հուսալիության իմաստով: Դնելով ժողովրդավարության համախմբման հարցը՝ Ս.Հանթինգթոնը, Ֆ.Ֆուկույաման և Ա.Պշտոսկին կարևորում են ժողովրդավարացման երրորդ ալիքի ընթացքում հաստատված վարչակարգերի անցումայնության հիմնախնդիրը, իսկ Տ.Լ.Կարլը և Ֆ.Շմիտերն այդ գործընթացների համար առաջարկում են չորրորդ ալիք: Եթե համախմբված ժողովրդավարությունը չի ավարտում անցման գործընթացը, ապա, ըստ երևույթին, կարելի է խոսել ժողովրդավարական վարչակարգի մի ձևից մյուսին անցումների մի ամբողջ դարաշրջանի մասին:

Ժողովրդավարության համախմբման հետազոտության մեջ ձևավորվել են մի քանի մոտեցումներ՝ **կառուցվածքային, անցումագիտական, ինստիտուցիոնալ**։ Ինչպես նշում է ռուս քաղաքագետ Լ.Սմորգունովը, «*կառուցվածքային մոտեցումն* ուշադրությունը սևեռում է ժողովրդավարացման գործընթացը որոշող արտաքին պայմանների վրա: *Անցումագիտական մոտեցումը* կապված է քաղաքականության մեջ գործող դերակատարների՝ քաղաքական կյանքի ժողովրդավարական ձևեր ընտրելու տեսության հետ: *Ինստիտուցիոնալ մոտեցումը* նշում է տարբեր ինստիտուցիոնալացված վարչակարգերի դերը ժողովրդավարության ամրապնդման գործընթացում» [1, c. 224]:

Անցումագիտության մեջ վարչակարգի փոփոխությունը դիտարկվում է որպես ազատականացման գործընթաց, որը խթան է քաղաքացիական հասարակության ինստիտուտների ձևավորման կամ վերականգնման և «հերթական ընտրությունների» անցկացման համար: Այստեղ սկզբունքային են համարվում երեք հանգամանք. **1. ազատականացում, 2. քաղաքացիական հասարակության ձևավորում կամ վերականգնում և այս ենթատեքստում՝ 3. նախօրոք անհայտ արդյունքներով արդար ընտրությունների անցկացում**: Սակայն վարչակարգային անցումները հնարավոր չէ բացատրել բացառապես ընտրությունների անցկացման միջոցով կամ դրանց արդյունքների հիման վրա, քանի որ իրավիճակային կառավարման պայմաններում անտեսվում են բազմաթիվ ազատական և ժողովրդավարական փոփոխություններ, ինչն էլ հանգեցնում է **«ընտրագանգվածային ժողովրդավարության»**: Ինչպես նշում են Տ.Լ. Կարլը և Ֆ.Շմիտերը, «նման սխալը բնորոշ է աշխարհում բոլոր տարածաշրջանների ժողովրդավարության ուսումնասիրություններին, ոչ միայն Կենտրոնական ու Արևելյան Եվրոպայի (ԿԱԵ) և նախկին Խորհրդային Միության (ՆՄՄ) երկրներում, հնարավոր է այն պատճառով, որ շատ հեշտ է ընտրություններին հետևել, դրանց արդյունքները դժվար չէ ներկայացնել թվային տեսքով և դասակարգել: Բայց սա բոլորովին այն չէ, ինչի մասին խոսվում է անցումային գրականության մեջ, և նման պրակտիկական կասկածելի է ինչպես էմպիրիկ, այնպես էլ նորմատիվ տեսանկյունից» [2, c. 6]: «Անցում-համախմբում» պարադիգմի տրամաբանությունն ուսումնասիրելու համար անհրաժեշտ է պարզել «անցման պայմանը»: Օրինակ, «ժողովրդավարական անցման» սկզբնական փուլում «անցման պայմանը» ազատականացման գործընթացն է, որին մի դեպքում բնորոշ է ընտրանու տարանջատվածությունը՝ «կոշտ» և «փափուկ» գծերի, իսկ մյուս դեպքում՝ ոչ: Այս առումով ուշագրավ ենք համարում Մ.Մաքֆոլի էմպիրիկ եզրահանգումը, որ ընտրանիների տարանջատումը չէ «նախկին կոմունիստական երկրների ազատականացման» գլխավոր պատճառը [3, p. 8]:

Ընտրանու նման տարանջատվածությունը **իրական, պոտենցիալ** կամ

նույնիսկ **էրևակայական** հասարակական ընդվզումների արդյունք է, և հենց դրանով է պայմանավորված այն հանգամանքը, թե արդյոք դա քաղաքացիական հասարակության ինստիտուտների ստեղծման կամ վերականգնման հնարավորություն կտա: Ըստ «Ազատությունների տան» փորձագիտական հետազոտությունների՝ Ալբանիայում, Ադրբեջանում, Բելառուսում, Բուլղարիայում, Էստոնիայում, Լիտվայում, Մակեդոնիայում, Ռումինիայում, Ռուսաստանում, Սերբիայում, Սլովենիայում և Ուկրաինայում անցման վաղ շրջանում դրա անցկացման գլխավոր գաղափարախոսները կոմունիստական կուսակցության *ներսում* գործող «նոր ժողովրդավարներն» էին, որոնք փորձում էին օգտագործել կուսակցության կազմակերպչական ենթակառուցվածքները՝ ընթացող վարչակարգային փոփոխությունների տեմպերի և ուղղությունների վրա վերահսկողություն սահմանելու համար [4]: Մեր կարծիքով՝ համանման սխեմա փորձվեց իրականացնել նաև Հայաստանում, սակայն այստեղ կոմունիստական կուսակցության ներսում գործող «նոր ժողովրդավարները» ուժեղ չէին:

«Ժողովրդավարության համախմբում» հասկացությունը, որպես կատեգորիալ գիտաբան, 1986թ. քննարկել են Գ.Օ'Դոնելը և Ֆ.Շմիտերը իրենց հրապարակած «Անցումը ավտորիտար կառավարումից» աշխատության մեջ, որտեղ առավելագույնս ներկայացված է անցումագիտական մոտեցումն այս թեմային [5, p. 73]: Հանրագումարելով XX դարի 50-60-ական թվականներին Աֆրիկայում և Լատինական Ամերիկայում ընթացող ժողովրդավարական անցման փորձը՝ անցումագետները ստիպված էին խոստովանել այդ երկրները թևակոխել են «կախյալ զարգացման» փուլ, որն արտացոլում է նոր ժողովրդավարական վարչակարգերի կայացման գործընթացների անարդյունավետությունը: Ուստի, անհրաժեշտ է այդ երկրներում ժողովրդավարական արժեքների ամրապնդման տեսական նոր դրույթներ մշակել: Դրա հետ մեկտեղ տեղի է ունեցել ակնհայտորեն արտահայտված մեթոդաբանական շրջադարձ, որը կապված է XX դարի 60-80-ական թվականներին գերիշխող՝ ժողովրդավարության պայմանների հայեցակարգի քննադատության հետ: Ընդհանուր քննադատական տրամադրվածության հետ մեկտեղ քաղաքագետներն ընդունում են նախորդ հայեցակարգի ներդրումը ժողովրդավարացման անհրաժեշտ գործոնների բացատրման հարցում, բայց համարում են, որ դա բավարար չէ. պետք է որոշել ոչ միայն անհրաժեշտ, այլև բավարար գործոնները և ոչ միայն ազատականացման տեսքով ժողովրդավարության անցման, այլև ժողովրդավարական համախմբման կայացման համար: Ֆ.Շմիտերը գրում է, որ ժողովրդավարացման մասին ներկայիս բանավեճը «բացասական վերաբերմունք է ներառում լայնորեն տարածված նախորդ դատողության նկատմամբ, ըստ որի՝ ժողովրդավարությունը գոր-

ծառնական պայման է կամ բարոյական հրամայական: Ո՛չ տնտեսական զարգացման մակարդակը, ո՛չ էլ բուրժուազիայի գերիշխանությունը չեն կարող ինքնաբերաբար երաշխավորել ժողովրդավարության առաջացումն ու, առավել ևս, ամրապնդումը: Այդ վարչակարգը նաև քաղաքակրթության, գրագիտության, կրթական հաջողությունների կամ առանձնահատուկ քաղաքական մշակույթի՝ նվաճված նախորդ մակարդակի ակնհայտ արդյունքը չէ: Սա չի բացառում այն փաստը, որ բարեկեցությունը, հարստության հարաբերականորեն հավասար բաշխումը, միջազգային շուկայում մրցունակ տնտեսությունը, լավ կրթված բնակչությունը, մեծ միջին խավը, ինչպես նաև բազմազանությունն ընդունելու, մրցակցին վստահելու և բախումները փոխզիջմամբ լուծելու պատրաստակամությունը առավելություններ են. սա նշանակում է հենց այն, որ ժողովրդավարությունը դեռևս պետք է ընտրվի, մարմնավորվի ու հավերժացվի «գործակալների», իրատես ապրող քաղաքական դերակատարների կողմից՝ իրենց հատուկ շահերով, կրքերով, հիշողությամբ և, ինչո՞ւ ոչ, *բախտով ու խիզախությամբ (fortuna u virt)*» [6, p. 158-159]: Ակնհայտ է, որ ժողովրդավարության համախմբման հետազոտողները տարբերություն են դնում ժողովրդավարական անցման և համախմբման միջև: Անցման ժամանակ կազմակերպվում են նոր կարգի հիմնական ինստիտուտները, որոնք սկսում են աշխատել ու փոխգործակցել խաղի նոր կանոնների համաձայն: Մինչդեռ համախմբումը պահանջում է նոր նորմերի ու վարչակարգի կառույցների ինստիտուցիոնալացում, լեգիտիմացման ընդլայնում և սկզբնական փուլերում հաստատված ինստիտուտների բնականոն գործունեությանը խոչընդոտող դժվարությունների վերացում: Ժողովրդավարության համախմբման գործընթացը ներառում է չորս ուղղություն. 1) արագ սահմանափակել, նվազագույնի հասցնել կամ կապակցել իր գաղափարական ու ինստիտուցիոնալ անհամապատասխանությունները, 2) հաստատել իր ինքնավարությունը հին իշխանությունների, հատկապես, զինվորական ուժերի առջև, 3) մոբիլիզացնել քաղաքացիական հասարակությունը՝ իր արտահայտման ձևերով, 4) զարգացնել ժողովրդի առջև պատասխանատու, կառավարություն կազմավորելու ընդունակ, հարաբերականորեն կայուն կուսակցական համակարգ [5, p. 89]: Թեև համախմբման այս ուղղությունները, մեր կարծիքով, ժողովրդավարացման երրորդ ակնհայտ հատուկ որոշ ընդհանուր պահեր են ներառում, սակայն դրանք աշխարհում, հատկապես հետկոմունիստական տարածքներում, լրացման կարիք ունեն, քանի որ այս մոտեցման մեջ հստակ մոդելավորված չեն հետագա ժողովրդավարական շարժումները:

1. Ժողովրդավարության համախմբման հիմնախնդիրները և գործոնները

Ս.Հանթինգթոնի «երրորդ ալիքի» հայեցակարգում ժողովրդավարության համախմբման հիմնախնդիրը կապված է 1980-90-ականների նոր հետադարձ ալիքի պայմանների հետ. ժողովրդավարության համախմբումը մի շարք հիմնախնդիրների (որոնց անխուսափելիորեն բախվում են նոր քաղաքական վարչակարգերը) լուծմանն առնչվող գործընթաց է: Ս.Հանթինգթոնն առանձնացնում է նման հիմնախնդիրների երեք տեսակ՝ **անցման, համատեքստային և համակարգային: Անցման հիմնախնդիրները** արդյունք են այն փաստի, որ երկրները մենիշխանական վարչակարգից սկսում են անցում կատարել ժողովրդավարականին: Այս գործընթացում Հանթինգթոնն առանձնացնում է երկու առանցքային հիմնախնդիր. 1) ինչպե՞ս պետք է վարվել հին վարչակարգի այն պաշտոնատար անձանց հետ, որոնք ակնհայտորեն մասնակցել են մարդու իրավունքների ճնշմանը (*«դահիճների հիմնախնդիր»*), 2) ինչպե՞ս նվազեցնել քաղաքականության մեջ զինվորականների ներգրավումը և զինվորականների ու քաղաքացիական ծառայողների միջև հարաբերությունների մասնագիտական կառուցվածք հաստատել (*«պրետորիական հիմնախնդիր»*):

Համատեքստային հիմնախնդիրները կապված են հասարակության բնույթի, նրա տնտեսության, մշակույթի և պատմության հետ: Այդ հիմնախնդիրները որոշ առումով անտարբեր են կառավարման ձևի նկատմամբ և առաջանում են ցանկացած վարչակարգի օրոք: Համատեքստային հիմնախնդիրների լուծումները ըստ երկրների տարբերվում են: Սակայն կարելի է առանձնացնել այնպիսիները, որոնք հատուկ են երրորդ ալիքի բոլոր երկրներին՝ խռովություններ, տեղական համայնքային բախումներ, տարածաշրջանային հակամարտություններ, աղքատություն, սոցիալ-տնտեսական անհավասարություն, դրամի արժեզրկում, տնտեսական աճի ցածր ցուցանիշներ, արտաքին պարտք:

Համակարգային հիմնախնդիրները նոր ժողովրդավարությունների ծնած համակարգի առանձնահատկությունների արդյունք են: Մենիշխանական քաղաքական համակարգերը տառապում են իրենց բնույթին առնչվող հիմնախնդիրներից (որոշումների կայացման չափազանց համակենտրոնացում, հետադարձ կապի պակաս, կախվածություն լեգիտիմությունից): Ժողովրդավարական համակարգերն ունեն իրենց սեփական հիմնախնդիրները, որոնք առաջանում են ժողովրդավարության երկարատև գոյության դեպքում: Նոր ժողովրդավարությունները դրանց դիմադրելու ուժ չունեն: Ս.Հանթինգթոնը նման հիմնախնդիրների թվին է դասում ժողովրդավարական փակուղին, որոշում կայացնելու անկարողությունը, ամբոխավարու-

թյան նկատմամբ սրված զգայունությունը, խոշոր տնտեսական միավորների շահերի գերակայությունը:

Ժողովրդավարության համախմբմանը նպաստող պայմաններից Մ.Հանթինգթոնը նշում է՝ ա) երկրի պատմության մեջ ժողովրդավարական զարգացման (հատկապես երկարատև) փորձի առկայությունը, բ) տնտեսական զարգացման, արդյունաբերացման ու կրթության համեմատաբար բարձր ցուցանիշները, գ) միջազգային կապերն ու արտասահմանյան օգնությունը, դ) ժողովրդավարական անցումն իրականացնելու, ժողովրդավարացման երրորդ ալիքում գտնվելու տվյալ երկրի երկարատևությունը, ե) ավտորիտար վարչակարգից ժողովրդավարականին խաղաղ, փոխհամաձայնեցված անցումը, զ) քաղաքական ընտրանու և բնակչության հանդուրժողական վերաբերմունքը ժողովրդավարական կառավարության մոտ առաջացած հիմնախնդիրները լուծելու անհնարինության նկատմամբ: Մ.Հանթինգթոնի կարծիքով՝ ժողովրդավարական անցման պայմաններում կարող են ծագել մի շարք գործոններ ևս, բայց այս վեցն առաջնային են:

Այսպիսով, ժողովրդավարական համախմբումը կապված է երկու գործընթացների՝ ժողովրդավարական վարչակարգի գործողության հետ անհամատեղելի՝ հին համակարգի մնացորդների վերացման և ժողովրդավարական խաղի կանոններն ամրապնդող նոր ինստիտուտների կառուցման հետ: Ժողովրդավարական համախմբումը բխում է ժողովրդավարության նվազագույն սահմանումից, որը ներառում է գաղտնի քվեարկություն, համընդհանուր ընտրական իրավունք և կառավարության պատասխանատվություն: Այս սահմանումը հիմնվում է Ռ.Դալի նկարագրած՝ ժողովրդավարության համար անհրաժեշտ պոլիարխիկ պայմանների ստեղծման հայեցակարգի վրա [7, c. 428-429]: Այսպիսով, կարելի է ասել, որ երկրում առկա է համախմբված ժողովրդավարություն, եթե բոլոր հիմնական քաղաքական ուժերն ու գործիչներն ընդունում են ժողովրդավարության նվազագույն սահմանմանը համապատասխանող ժողովրդավարական խաղի կանոնները, և եթե նրանցից ոչ ոք չի օգտագործում այդ կանոններից դուրս գտնվող որևէ միջոց: Այստեղ, ինչպես երևում է, շեշտը դրվում է պայքարող քաղաքական ուժերի՝ որպես իրենց գործունեության հրամայականներ ընդունած փոխհարաբերությունների ժողովրդավարական կանոնների, ինստիտուցիոնալացման վրա: Փաստորեն, խոսքը քաղաքական պայքարի շրջանակների որոշակի ամրագրման մասին է, որոնց խախտումը սպառնալիքի տակ կոնի ողջ ժողովրդավարական քաղաքական համակարգը:

Խաղի կանոնների ամրագրման ներքին պայմաններին հատուկ ուշադրություն է դարձնում նաև Լ.Դայմոնդը: Նա տարբերություն է դնում պաշտոնական բնույթ ունեցող ընտրական ժողովրդավարության (կամ «կեղծ ժողովրդավարության») և ոչ միայն ընտրությունների պաշտոնական ընթացա-

կարգը, այլև քաղաքացիական իրավունքներն ու քաղաքական ազատություններն ապահովող իրական ազատական ժողովրդավարության միջև: Օգտագործելով «Ազատության տան» ցուցանիշը՝ նա խոսում է այն մասին, որ համախմբվածության հատկանիշով օժտված են հենց ազատական ժողովրդավարությունները: 1990-ական թվականներին ազատության և ժողովրդավարության ոլորտում իրավիճակի վերլուծությունն ապացուցում է, որ պաշտոնական ժողովրդավարությունների մեջ ազատ պետությունների մասնաբաժինը նվազման միտում ունի: «Ըստ էության,- գրում է Դայմոնդը,- համախմբումն այնպիսի լայն ու խոր լեզիտիմացման նվաճման գործընթաց է, որի դեպքում բոլոր քաղաքական դերակատարները՝ ինչպես ընտրանու, այնպես էլ զանգվածների մակարդակով, հավատում են, որ իրենց հասարակության համար ժողովրդավարական վարչակարգը ավելի լավն է, քան ցանկացած այլ իրատեսական այլընտրանք, որն իրենք կարող են երևակայել» [8, Ը. 22-23]: Ընդ որում՝ նման լեզիտիմությունը ենթադրում է ոչ միայն համակարգի նկատմամբ ինչ-որ մի վերացական վստահություն, այլ որոշակի նորմատիվային պարտավորությունների ու վարքաբանական կառույցների ներառում:

Այս գործընթացում որոշիչը քաղաքական մշակույթի կերպափոխությունն է, որն արտահայտվում է վարքաբանական կառույցներում և ենթադրում անցում ժողովրդավարության «գործիքային» դրույթներից «սկզբունքայիններին», այսինքն՝ ժողովրդավարությունն այդ դեպքում դառնում է արժեք, որը քաղաքական սոցիալականացման ընթացքում փոխանցվելով որպես հույսի կամուրջ՝ առաջատարի իրավունքով արմատավորվում է անձի արժեքային կառուցվածքում [8, Ը. 24]:

Դեպի ժողովրդավարություն անցնելու գործընթացի և դրա համախմբման միջև տարբերությունը հանգեցնում է որոշ անհրաժեշտ և բավարար պայմաններ սահմանելու անհրաժեշտության, որոնց դեպքում կարող է սկսվել վերջին գործընթացը: Անդրադառնալով դրան՝ Խ.Լինցն ու Ա.Ստեփանը երեք այդպիսի պայման են նշում:

Առաջին, հասարակության ժամանակակից կազմակերպման պայմաններում ազատ և ընդունված ընտրությունները չեն կարող իրականացվել. հաղթողները չեն կարող լեզիտիմ իշխանության մենաշնորհ իրականացնել, իսկ քաղաքացիները՝ արդյունավետ իրացնել օրենքի գերիշխանությամբ պաշտպանված իրենց իրավունքները, եթե պետություն գոյություն չունի:

Երկրորդ, ժողովրդավարությունը չի կարող համախմբված դառնալ, եթե ժողովրդավարական անցումն ավարտված չէ: Այն համարվում է ավարտված, երբ իշխանության բոլոր ճյուղերի (օրենսդիր, գործադիր և դատական) գործունեությունը մեծապես ազատ է զինվորական, կրոնական կառույցներից և այլ ավտորիտար ուժերից:

Երրորդ, ոչ մի վարչակարգ չի կարող ժողովրդավարական անվանվել, քանի դեռ նրա կառավարողները ժողովրդականորեն չեն կառավարում, այսինքն՝ գործադիր իշխանությունը չի անտեսում սահմանադրությունը, անձի և փոքրամասնությունների իրավունքները չեն ճնշվում, օրենսդիր իշխանության գործերին այն չի միջամտում և այլն [9, p. 14-15]:

Բոլոր երեք պայմանները վկայում են այն մասին, որ համախմբված կարող է լինել ոչ միայն ժողովրդավարությունը, այլև ոչ ազատականացված, ոչ ժողովրդավարական վարչակարգը՝ կեղծ, խառնածին ժողովրդավարությունները, որտեղ ժողովրդավարական ինստիտուտները համագոյակցում են ոչ ժողովրդավարականների հետ՝ ժողովրդավարական պետության վերահսկողությունից դուրս: Համախմբված ժողովրդավարություն ասելով նրանք, այսպիսով, հասկանում են «քաղաքական վարչակարգ, որի օրոք ժողովրդավարությունը՝ որպես ինստիտուտների, կանոնների և կառուցվածքային դրոշմների ու խոչընդոտների բարդ համակարգ, բառացիորեն դարձել է «միակ խաղը քաղաքում» [9, p.16]: **Վարքաքանական իմաստով** ժողովրդավարական վարչակարգն այն դեպքում կարելի է համախմբված համարել, երբ ոչ մի ազգային, սոցիալական, տնտեսական, քաղաքական կամ ինստիտուցիոնալ նշանակալից դերակատար հնարավորություն չունի իր նպատակներին հասնել ոչ ժողովրդավարական վարչակարգի ստեղծման կամ էլ պետությունից առանձնացման միջոցով: **Գործոնային իմաստով** ժողովրդավարական վարչակարգը համախմբված է, երբ բնակչության ճնշող մեծամասնությունը, նույնիսկ տնտեսական հիմնախնդիրների ու հիասթափությունների առկայության պայմաններում, կարիք ունի, որ ժողովրդավարական ընթացակարգերը և ինստիտուտներն առավելագույնս համապատասխանեն հասարակական կյանքի կառավարմանը, երբ հակահամակարգային այլընտրանքների պաշտպանումը փոքրիշատե մեկուսացված է ժողովրդամետ ուժերից: Վերջապես, **սահմանադրական իմաստով** ժողովրդավարական վարչակարգը համախմբված է, երբ կառավարողներն ու կառավարվողներն ընթացակարգերի և ինստիտուտների շրջանակներում միևնույն կերպ են ենթարկվում բախումների լուծման կառուցակարգին՝ նոր ժողովրդավարական ընթացակարգ հաստատած սահմանադրական կարգին:

2. Ժողովրդավարության համախմբման օրինաչափությունները կերպափոխումների գործընթացում

ԽՍՀՄ փլուզումից հետո քաղաքական գիտության մեջ ծառայել է մի հարց. կարելի է, արդյոք, ժողովրդավարական անցման գործընթացների վերլուծության ժամանակ օգտագործել Լատինական Ամերիկայի և Հարավային Եվրոպայի երկրների ուսումնասիրության փորձի հիման վրա կուտակված

գիտելիքները, որոնք վերաբերում են ավտորիտար կառավարման վարչակարգից անցման և նոր ժողովրդավարությունների համախմբման ուղիների օրինաչափություններին:

Նման հարցադրումը տարակարծություններ է առաջացրել հետկոմունիստական երկրների կերպափոխման գործընթացն ուսումնասիրող մասնագետների մոտ: Առաջացած տարակարծությունները համակողմանի վերլուծության ենթարկելով՝ Տ.Լ.Կարլը և Ֆ.Շմիտերը փորձել են օրինաչափություններ տեսնել երկու տարբեր տարածաշրջաններում ընթացող կերպափոխման գործընթացներում: Հարցի քննարկման շրջանակներում նման հանրագումարը հնարավորություն է տալիս ժողովրդավարական անցումներն ուսումնասիրել մի կողմից՝ հետկոմունիստական տարածքներում առաջացած «նոր ժողովրդավարների» համակարգերն իրար հետ համեմատելով, մյուս կողմից՝ ստեղծագործաբար (որոշ դեպքերում՝ նաև քննադատաբար) օգտագործել նախկին անցումները և համախմբումները նկարագրող տեսությունները՝ որոշ դեպքերում նույնիսկ նմանությունների ու տարբերությունների վերհանման միջոցով կատարելով բավական ռիսկային «կրոս-տարածաշրջանային» համեմատություններ:

Այս նկատառումներով էլ տվյալ աշխատանքը կատարելիս նպատակ ենք ունեցել ՀՀ ժողովրդավարական անցման գործընթացում հիմնավորել «անցում-համախմբում» պարադիգմի անհրաժեշտությունը: Ելակետ ընդունելով «հետկոմունիստական բացառիկությունը»՝ փորձենք բացահայտել, թե ժողովրդավարական անցման որ մակարդակում է ձեռք բերվում փոխհամաձայնություն, իսկ որ պարագայում են (ինչը ՀՀ-ում առկա խնդիրների տեսանկյունից կարևոր է) պահպանվում տարածայնությունները: Իհարկե, հասկանալի է, որ, նկատի ունենալով կուտակված նյութի բազմաշերտությունը, չենք հավակնում սպառիչ պատասխան տալ «անցում-համախմբում» պարադիգմին վերաբերող բոլոր հիմնախնդիրներին: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ մեր կողմից ուսումնասիրվում է ՀՀ ժողովրդավարական անցումը, կարևոր ենք հետկոմունիստական վարչակարգային փոփոխությունների նկատմամբ քննադատական կիրառման միայն առավել վաղ փորձերի և, առաջին հերթին, Մ.Մաքֆուլի «Ժողովրդավարացման չորրորդ ալիք և բռնատիրություն» (*The Fourth Wave of Democracy and Dictatorship*) մենագրության մեջ առկա մոտեցումները:

Տ.Լ.Կարլը և Ֆ.Շմիտերը, բազմամակարդակ վերլուծության ենթարկելով այն գործընթացները, որոնք տեղի են ունենում հետկոմունիստական երկրներում, հանգեցին այն եզրակացության, որ դրանք հիմնականում համանման են Հարավային Եվրոպայում և Լատինական Ամերիկայում տեղ գտած գործընթացներին: Այս մոտեցման հիմքի վրա նրանք ձևակերպել են

մի շարք հայեցակարգեր, կանխադրույթներ և վարկածներ, որոնք, մեր կարծիքով, կարող են օգտակար լինել ՀՀ ժողովրդավարական անցման վերլուծության ժամանակ: Իհարկե, ժողովրդավարական անցման նախնական փուլում այս հեղինակները, իրենց խոստովանությամբ, չէին կանխատեսում, «թե հետկոմունիստական պետությունների ո՞ր մասը երբևիցե կբավարարի մեր կողմից սահմանված «հաջող ժողովրդավարական անցման պայմաններին» և համապատասխանաբար կկանգնի իրական վարչակարգային փոփոխությունների ուղու վրա» [10]: Այնուամենայնիվ, հանրագումարելով հետկոմունիստական երկրների (հատկապես Մերձբալթյան) ժողովրդավարական անցման հաջողությունները՝ նրանք փաստեցին, որ այդ երկրները նույնիսկ ավելի արագ ավարտեցին անցումը ժողովրդավարության, քան Հարավային Եվրոպայի և Լատինական Ամերիկայի իրենց նախորդները: Փաստորեն, հետկոմունիստական երկրների ժողովրդավարական անցման արդյունքները վկայում են, որ այդ տարածաշրջաններում ձևավորվել են ժողովրդավարություններ, որոնք իրենց բնույթով ունեն անցումային (կամ «խառնածին») վարչակարգեր և մենիշխանություններ: Ըստ «Ազատության տան» փորձագետների՝ Բուլղարիայում, Խորվաթիայում, Չեխիայում, Էստոնիայում, Հունգարիայում, Լատվիայում, Լիտվայում, Լեհաստանում, Ռումինիայում, Սլովակիայում և Սլովենիայում հաստատվել են **«Ժամանակակից ազատական ներկայացուցչական ժողովրդավարություններ»** [4]: Այս երկրների քաղաքական ընտրանուն հաջողվել է երկխոսություն ծավալել ազգաբնակչության հետ և համախմբել իրենց վարչակարգերը: Արդյունքում՝ ժողովրդավարական մենիշխանությունը կամ նույնիսկ «խառնածին» վարչակարգով պայմանավորված հետընթացի հավանականությունն այստեղ մեծ չէ: Մինչդեռ, նույն փորձագետների կարծիքով, Ալբանիայի, Հայաստանի, Բելառուսի, Բոսնիայի և Հերցեգովինայի, Վրաստանի, Մակեդոնիայի, Մոլդովայի, Մոնղոլիայի, Ռուսաստանի, Սերբիայի, Չեռնոգորիայի և Ուկրաինայի հետագա զարգացման հետագիծը դեռևս այդքան էլ հստակ չէ՝ անկախ նրանցում տեղի ունեցող «գունավոր» հեղափոխություններից: Այդ երկրները, այնուհանդերձ, հնարավորություն ունեն ժողովրդավարական վարչակարգեր հաստատել, «հատկապես, եթե նրանց հաջողվի որոշել իրենց ազգային սահմանները» [2, c. 6]: Այս նկատառումներով անհրաժեշտ է փաստել, որ ժողովրդավարական անցումն իր տարբեր փուլերում կարող է առանձնահատուկ դրսևորումներ ունենալ հետկոմունիստական երկրներից յուրաքանչյուրում: Խնդիրը միայն լեզվաբանական կամ մշակութային բազմազանության, քաղաքական կայունության աստիճանի, զարգացման մակարդակի կամ նույնիսկ պետականության կայացման մասին չէ: Ավելին, այն բոլոր *արևմտակարգական, արևելակարգական և հարավային* երկրները, որոնք ժողովրդավարական անցման պայմաններում հասել են նույն իրավունքներին և

կառուցել համանման ինստիտուտներ, ունեն կյանքի որակի և մակարդակի կայուն չափորոշիչներ և հասել են քաղաքական գործընթացների իրատեսության, էականորեն չեն տարբերվում իրարից: Այս նկատառումներով Տ.Լ.Կարլը և Ֆ.Շմիտերը գրում են. «...Չնայած կոմունիզմը նման չէ ավտորիտար կառավարման այլ ձևերին, այնուհանդերձ, հետկոմունիստական երկրների յուրահատկություններն այդքան էլ մեծ չեն ...» [2, c. 8]:

Այս լավատեսական եզրակացությունը չտարածելով ՆԽՄ արևելյան հանրապետությունների վրա՝ Տ.Լ.Կարլը և Ֆ.Շմիտերը նշում են, որ անդրկովկասյան և միջինասիական պետություններում ընթանում են բացառապես այլ գործընթացներ, և սա ընդունում են ինչպես այն գիտնականները, որոնք այս երկրներում տեսնում են անցման յուրահատուկ տարատեսակ՝ պայմանավորված այս երկրներին ավանդաբար բնորոշ հասարակական կարգերով, այնպես էլ նրանք, ովքեր մերժում են զարգացող երկրների փորձը և դա բացատրում քաղաքական խմբավորումների միջև պայքարով ու հումքի (առաջին հերթին նավթի, բնական գազի և բամբակի) արտահանումից կախվածությամբ: Տեստեսական սեկտորի մոդելի օգտագործման փորձի ուսումնասիրության համար բավական օգտակար են «նավթային», «բամբակային» և այլ բնույթի մոնոկուլտուրային տնտեսությունների հետազոտությունները, որոնք տարածում են գտել Աֆրիկայում և Լատինական Ամերիկայում: Այս առումով ուշագրավ է Կենտրոնական եվրոպական համալսարանի անցումագետների կողմից մշակված նոր նախագիծը, որը նպատակաուղղված է «գերակշռող սեկտորի» և «մոնոկուլտուրային տնտեսությունների» տեսությունների ներուժի վերհանմանը՝ Կասպյան ավազանի և հետկոմունիստական երկրների զարգացման հետազոտության ուսումնասիրության ժամանակ [11]:

Հետկոմունիստական տարածաշրջանի քաղաքական զարգացման այս տարբերակներն ակնհայտորեն վկայում են, որ ժողովրդավարական անցման գործընթացը խիստ բազմաբնույթ և բազմաշերտ է, որն էլ հնարավորություն է տալիս, դիտարկելով XX դարի 50-60-ական թթ. անցումագիտական մոդելները, ծանրակշիռ հակափաստարկներ մշակել նրանց դեմ՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ *անցում ասելով պետք է հասկանալ ոչ թե անցումը ամբողջատիրությունից մենատիրության (ինչպես սկզբում էր), այլ անցում՝ ժողովրդավարության:*

Հարկ է նշել, որ քննարկվող երկու մոտեցումներն էլ ստեղծվել են դեռևս Լատինական Ամերիկայի երկրների ուսումնասիրության ընթացքում, երբ հետազոտողները փորձում էին գտնել «անցում-համախմբում» պարադիգմի կիրառման ուղիները՝ «անբարենպաստ կառուցվածքային» պայմաններում: Հետկոմունիստական անցումների մի շարք մասնագետներ պնդում են, որ կոմունիստական «պարտոկրատիկ» ընտրանին պահպանած երկրներում

(Ադրբեջան, Վրաստան) և այն «... երկրների խմբում», որտեղ «նոր ժողովրդավարները» կոմունիստներն են, հաստատվել են միայն «ֆասադային» կամ «ընտրագանգվածային» ժողովրդավարություններ, որոնց քողի տակ բարգավաճող մենատիրական գործելաձևերի վրա հենվում են մենատիրական արժեքներ կրող ընտրանիները և զանգվածները: Մյուսներն ապացուցում են, որ չկարգավորվող բախումների և անարդյունավետ քաղաքականության հետևանքով այս և մյուս հետկոմունիստական վարչակարգերն արատավոր են, ընդ որում՝ դրանց գործառնության ընթացքում իրական ժողովրդավարությունների հաստատման խափանումներն անընդհատ հաճախակի են դառնում, և այդ իսկ պատճառով այստեղ վաղ թե ուշ կհաստատվեն մենիշխանական կարգեր: Նման փաստարկումները կատարվել են այն երկրների փորձի համակարգված վերլուծության հիման վրա, որտեղ անցումը մենիշխանությունից չի ավարտվել ժողովրդավարության կայացմամբ: Նկատի պետք է ունենալ, որ «խառնածին վարչակարգի» և «ընտրագանգվածայնության» հայեցակարգերն իրականում մշակվել են Կենտրոնական Ամերիկայի ժողովրդավարական անցման իրավիճակը վերլուծելու ժամանակ: Ուշագրավ է, որ Լ.Դայմոնդն այս հասկացություններն օգտագործում է Լատինական Ամերիկայի և Աֆրիկայի տարածաշրջաններում ընթացող ժողովրդավարական անցման վերլուծության ժամանակ [12]:

Մեր համոզմամբ, հարցը, որով պետք է հետաքրքրվեն հետկոմունիստական անցումներով զբաղվող մասնագետները, այն է, թե ինչու այդքան շատ հետկոմունիստական երկրներ դարձել են ոչ միայն «արատավոր» ժողովրդավարության կրողներ, այլև մենիշխանության դեմ պայքարում հանգեցրել են «գունավոր հեղափոխությունների»: Այս համատեքստում անհրաժեշտ է կարևորել, որ դեպի ժողովրդավարություն ընթացող երկրներում, որոնք արդեն «հանգրվանել» են մենիշխանության գրկում, երբ կհաջողվի իրատեսորեն անցում կատարել ժողովրդավարության՝ «անցում – համախմբում» պարադիգմի օգնությամբ:

3. «Անցում-համախմբում» պարադիգմի տրամաբանությունը. ժողովրդավարական անցման մանրակերտը

Համաձայն «անցում-համախմբում» պարադիգմի շրջանակներում մշակված որոշ կանխադրությունների՝ վարչակարգի փոփոխությունը պետք է դիտարկվի որպես առանձին առարկայական ոլորտ, այսինքն՝ ցանկացած դեպքում համախմբում ենթադրող վարչակարգի փոփոխությունն այսօր ընդունված է մեկնաբանել որպես «նոր ժողովրդավարներ» երկրների քաղաքական զարգացման համեմատաբար ինքնուրույն փուլ: Հաշվի առնելով այս հասկացության առանձնահատկությունը՝ անհրաժեշտ է փաստել, որ կոմունիստ-

տական համակարգի անկման գործընթացներն ուսումնասիրողները «ինչ-որ նոր բանի» կայացման ակնկալիքով առաջնորդվել են այն լեզվամտածողությամբ, որը տեսականորեն առկա է Հարավային Եվրոպայում և Լատինական Ամերիկայում վարչակարգային փոփոխությունների ուսումնասիրման ժամանակ: Դա նշանակում է, որ հետկոմունիստական երկրներին վերաբերող անցումը, որպես ժամանակային անհայտ տևողություն, բնութագրական է անորոշության ծայրահեղ բարձր աստիճանով, երբ դերակատարների գործողությունները դժվար կանխատեսելի են, ընտրությունը՝ անորոշ, իսկ քաղաքացիները, օտարվելով սոցիալական իրականությունից, փախուստ են կատարում «նոր ժողովրդավարների» բաղձալի բանակից:

Այժմ անդրադառնանք այն խնդիրներին, որոնք ժողովրդավարական անցման մանրակերտը քննարկելիս առաջացնում են ավելի խոր տարածայնություններ: Առաջին հերթին կուզենայինք ընդգծել «անցում-համախմբում» պարադիգմին վերաբերող մի համակարգային ընդհանրություն. անցումագիտությանը վերաբերող գրականության մեջ երբեք միարժեք չի գնահատվում այն փաստը, որ բոլոր այն երկրներում, որտեղ փոխվում են առաջնորդները, հավաքագրվում է նոր ընտրանի, ազատականացվում են քաղաքական կյանքի առանձին չափորոշիչները, ընդունվում են նոր սահմանադրություններ, անցկացվում են այլընտրանքային ընտրություններ, տեղի է ունենում վարչակարգի փոփոխություն: Այս նկատառումներով Տ.Լ.Կարլը և Ֆ.Շմիտերը փաստում են. «Հարավային Եվրոպայի և Լատինական Ամերիկայի պատմությունն ուսումնասիրողներից ոչ ոք (որի իմաստավորումից էլ առաջացան անցումագիտության հայեցակարգերն ու վարկածները) նման բան չէր հայտարարի: Այս երկու տարածաշրջանները հատկապես «հարուստ» են մենիշխանական վարչակարգի դեմ «հեղափոխություններով», որոնք առաջացնում են մենիշխանության նոր կամ վերափոխված ձևեր» [2, c. 6]: Լատինաամերիկյան երկրներում զինվորական ընտրանին ստեղծել է սեփական սահմանադրությունը, նախաձեռնել հանրաքվեներ, հիմնադրել քաղաքական կուսակցություններ, ձևավորել նոր խորհրդարան: Այնուհանդերձ, այդ երկրներից ոչ մեկում այսօր չի ուսումնասիրվում հաջող ժողովրդավարական անցման փորձը: Այս ամենը հիմք ընդունելով՝ կարող ենք պնդել, որ վարչակարգային անցումը ամեննին էլ չի նշանակում անցում ժողովրդավարության: Ընդհակառակը, անցման տարբեր տեսակների ուսումնասիրությանը նվիրված գրականության մեջ հստակ համակարգված է, որ վարչակարգային փոփոխություններ սկսելուց հետո անգամ զարգացման հետագծերը կարող են լինել ամենատարբեր. որոշ երկրներ կշարժվեն դեպի ժողովրդավարության համախմբում, մյուսները՝ դեպի մենիշխանական կառավարման նոր ձևեր, երրորդներում կհաստատվի «խառնածին» վարչակարգի այս կամ այն

ձևը: Հենց այս պատճառով «անցում-համախմբում» պարադիգմը ձևավորվեց կառավարման մենիշխանական համակարգից անցման գործընթացի քննարկումների ժամանակ: Քննադատել անցումագետներին այն բանի համար, որ նրանք չեն զբաղվում ժողովրդավարական անցման ընդհանուր մոդելի մշակման հարցերով, արդարացի չէ, քանի որ յուրաքանչյուր երկիր ունի «անցում-համախմբում» պարադիգմի իրականացման սոցիալ և էթնոմշակութային առանձնահատուկ պայմաններ: Այս պայմանների հաշվառումը կառուցվածքային բնույթ չունի, այսինքն՝ «անցում-համախմբում» պարադիգմի շրջանակներում հնարավոր չէ համակարգել *ենթակառուցվածքների ինչ-որ ընդհանուր խումբ, որն անհրաժեշտ է կառավարման մենիշխանական համակարգից անցման համար և ինչը կարող է բացատրել այդ անցումը*: Այնուամենայնիվ, գոյություն ունեն կառուցվածքային պայմաններ, որոնք օգնում են հասկանալ, թե ինչու է այս կամ այն երկրում առաջացել հաստատուն և «բարձրորակ» ժողովրդավարություն, որն աչքի է ընկնում **հասարակական համակեցության կենսունակությամբ և քաղաքական կարգի կայունությամբ**: Մեր կարծիքով՝ կառուցվածքային պայմանների ուսումնասիրման համար ուշագրավ է ժողովրդավարացման տեսաբանների մեծամասնության կողմից ընդունված, Ռաստոտի հայտնաբերած՝ «եթե չկա ազգ, ապա չկա ժողովրդավարություն» օրինաչափությունը: «Անցում-համախմբում» պարադիգմի տրամաբանությունն ուսումնասիրելու և անորոշությունից խուսափելու համար անհրաժեշտ է ոչ թե *սյարգել*, ինչպես գրում է Ֆ.Շմիտերը, այլ **հստակեցնել** «անցման պայմանը»: Օրինակ, «ժողովրդավարական անցման» սկզբնական փուլում «անցման պայմանը» ազատականացման գործընթացն է, որին մի դեպքում բնորոշ է ընտրանու «կոշտ» և «փափուկ» գծերի տարանջատվածությունը, իսկ մյուս դեպքում՝ ոչ: Այս առումով ուշագրավ ենք համարում Մ.Մաքսիմի Հմայիրիկ եզրահանգումը, ուր «նախկին կոմունիստական երկրների ազատականացման» գլխավոր պատճառը ընտրանիների տարանջատումը չէ [3, p.8]: Ելակետ ընդունելով այն մոտեցումը, համաձայն որի՝ Մ.Գորբաչովը «կոնսենսուսային» թեկնածու էր, Մ.Մաքսիմը նրան չի դիտարկում որպես «արտաքին ֆիգուր»: Ընտրանու նման տարանջատվածությունը **իրական, պոտենցիալ** կամ նույնիսկ **երևակայական** հասարակական ընդվզումների արդյունք է, և հենց դրանով է պայմանավորված այն հանգամանքը, թե դա արդյոք հնարավորություն կընձեռի քաղաքացիական հասարակության ինստիտուտների ստեղծման կամ վերականգնման համար: Ըստ «Ազատության տան» փորձագիտական հետազոտությունների՝ Ալբանիայում, Ադրբեջանում, Բելառուսում, Բուլղարիայում, Էստոնիայում, Լիտվայում, Մակեդոնիայում, Ռումինիայում, Ռուսաստանում, Սերբիայում, Սլովենիայում և Ուկրաինայում անցման վաղ շրջանում դրա անցկացման

գլխավոր գաղափարախոսները պատկանում էին կոմունիստական կուսակցության ներքուստ գործող «նոր ժողովրդավարների» խմբավորումներին, որոնք փորձում էին օգտագործել կուսակցության ենթակառուցվածքները՝ ընթացող փոփոխությունների տեմպերի և ուղղությունների վրա վերահսկողություն սահմանելու համար [4]: Փաստորեն, ազատականացման գործընթացը սկսվել և ընթացել է վերնից: Արդյունքում էլ կառավարող կուսակցության ներքին տարանջատվածությունը ժամանակի ընթացքում հանգեցրեց լայն զանգվածների մոբիլիզացման, որն ուղեկցվում էր ոչ միայն սոցիալական, այլև ազգայնական գունավորումներով:

Անցումագիտական մոտեցման հայեցակարգային մյուս նախադրյալը ենթադրում է, որ գոյություն ունեն բազմաթիվ ճանապարհներ, որոնցով մենիշխանական համակարգի կործանումից հետո կարող են ընթանալ հանրության քաղաքական զարգացումը և համախմբումը: Իսկ դրանցից սկզբունքորեն ոչ թե մեկը, այլ մի քանիսն են տանում ժողովրդավարության համախմբման: Հանրագումարելով ոչ միայն Լատինական Ամերիկայի և Աֆրիկայի, այլև հետկոմունիստական երկրների փորձը՝ ակնհայտ է, որ որոշակի ուղու ընտրությունը պայմանավորված է տապալված ոչ ժողովրդավարական վարչակարգի բնույթով [13]: Այսպիսով, **ժողովրդավարական անցումը եզակի ուղով զարգացող գործընթաց չէ, այլ այլընտրանքային զարգացման ուղիների մի համակարգ, որի օգնությամբ էլ ուրվագծվում է ժողովրդավարության համախմբման ծրագիրը:**

Այս ուղիներն ուսումնասիրելիս պետք է հաշվի առնել երկու գործոն. մի կողմից՝ **ընտրանու և զանգվածների ռազմավարությունը, մյուս կողմից՝ կառավարող խմբերի և իրենց ընդդիմադիրների միջև գոյություն ունեցող ուժերի հարաբերությունը:** Նշված գործոնների հայեցակարգումը և դրանց ենթադրական ազդեցության գնահատականը նկատի ունենալով էլ անցումագետներ Տ.Լ.Կարլը և Ֆ.Շմիտերը անցումները բաժանել են չորս կատեգորիաների՝ **1. պակտ (դաշինք), 2. փաթաթում, 3. հեղափոխություն և 4. բարեփոխություն:**

Փաստորեն, ՆԽՄ երկրներին ներկայացված է կանխավ մոդելավորված անցման ձևերի ամբողջական համակարգ, որտեղ նշված սցենարները, կախված քաղաքական ընտրանու և զանգվածների միջև առկա երկխոսության որակից, հաջորդում են իրար և պայմանավորում ժողովրդավարական համախմբման գործընթացները: Դիտարկվող սցենարներից «հեղափոխությունը», որն արտահայտվում է հեղաշրջմամբ, հազվադեպ է հանգեցնում ժողովրդական անցումի: Այդ պատճառով էլ այն հիմնականում գտնվում է վերահսկողության տակ:

Ըստ «Ազատության տան»՝ հետկոմունիստական որոշ երկրներում ժո-

ղովրդավարական անցումը նախաձեռնվեց ներքևից՝ իրենց «նոր ժողովրդավարներ» հռչակած բարեփոխողների կողմից, որոնք քաղաքական ընտրանու մաս չէին (կամ նույնիսկ դրա հետ բախումներ ունեին) [4]: Այդպես եղավ Հայաստանում, Չեխիայում, Խորվաթիայում, Վրաստանում, ԳԴՀ-ում և Լատվիայում: Պակտային ուղիով անցած երկրների թվին են դասվում Լեհաստանը (որտեղ միաժամանակ նկատվում են նաև «բարեփոխական» անցման տարրեր) և, հնարավոր է, Մոնղոլիան և Մոլդովան: Այնպիսի երկրներում, ինչպիսին են Ալբանիան, Ադրբեջանը, Բելառուսը, Էստոնիան, Լիտվան, Մակեդոնիան, Ռումինիան, Ռուսաստանը, Սերբիան, Սլովենիան և Ուկրաինան, ամենայն հավանականությամբ, ժողովրդավարական անցումն արդեն «պարտադրական» էր: Նման բազմազանությունը հնարավորություն է տալիս եզրակացնելու, որ հետկոմունիստական վարչակարգերի համար «անցումը» միաշափ և միաժամանակյա գործողությունն չէ: Ակնհայտ է, որ 1980-ականների վերջերին և 1990-ականների սկզբներին այդ երկրների սոցիալ-տնտեսական և մշակութային համակարգերն ու հատկապես նրանց քաղաքական ենթակառուցվածքները խիստ տարբեր էին: *Մեր կարծիքով՝ հետկոմունիստական աշխարհում անցման արդյունքների տարբերակման բացատրությունը կօգնի կոմունիստական մենիշխանության տեսակների առավել մանրամասն դասակարգմանը՝ ընդգծելով տարածաշրջանի ներսում առկա երկրների տարբերությունը: Դրա հետ մեկտեղ, այս երկրների՝ ուրիշ պետություններից տարբերությունների և նմանությունների վերլուծությունը միաժամանակ թույլ կտա ստուգել այն վարկածը, որ անցման ձևը կախված է սկզբնական մենիշխանական վարչակարգի տեսակից:*

Անցման ձևերի և դրանց ազդեցության «նմանություններ-տարբերություններ» համակարգի բացահայտումը, անկասկած, կախված է դրանց դասակարգումից: Փաստորեն, Տ.Լ.Կարլի և Ֆ.Շմիտերի առաջարկած դասակարգման համաձայն, «անցումը» պետք է դիտարկել ոչ թե որպես կարճաժամկետ, այլ համակարգված գործողությունների երկարաժամկետ գործընթաց, որի ընթացքում **պակտը, փաթաթումը, հեղափոխությունը և բարեփոխությունները** կարող են հանդես գալ կամ առանձին-առանձին, կամ էլ միասին: Թե որ գործընթացը գերակա կլինի՝ «պակտային», թե «բարեփոխական», պայմանավորված է ներքևների ճնշմամբ, համեմատաբար խաղաղ տրամադրվածությամբ, բայց կովին մոբիլիզացված (և խիստ) վարչակարգի ընդդիմադիրների (կոշտ կամ փափուկ) բանակցային արվեստով և անցումներով, որոնք «պարտադրված» են վերևից՝ քաղաքական ընտրանու ներսի որոշ խմբավորումների կողմից: Ըստ անցումագետ Մ.Մաքֆոլի՝ լատինաամերիկյան և ասիական երկրներում անցումների մեծ մասը «պարտադր-

ված» էր վերնից և իրականացվում էր ընտրանու կողմից: Այդ տեսակի անցումներն ունեին մի «հիանալի» հատկություն. դրանք հաճախ հանգեցրել են անկանխատեսելի հետևանքների, և այն բանից հետո, երբ ազատականացման ազդեցության տակ առաջանում կամ վերածնվում է քաղաքացիական հասարակություն և ստեղծվում է հնարավորություն անորոշ արդյունքներով ընտրություն անցկացնելու համար, դեպքերը սկսում են զարգանալ ամեննին ոչ այնպես, ինչպես ակնկալում էին փոփոխությունների նախաձեռնողները: Հենց սա էլ տեղի ունեցավ Չիլիում, Պարագվայում, Պորտուգալիայում և Մեքսիկայում: Իսկ թե արդյոք Արևելքում գոյություն ունի սահմանված օրինաչափություն՝ վիճելի հարց է, համենայնդեպս Մ.Մաքսիլը պնդում է, որ հետկոմունիստական երկրներում ամենատարածվածը (և հաջողվածը) «ներքնից պարտադրված» անցումներն էին [3]:

Ակնհայտ է, որ անցումային երկրների դասակարգման Մ.Մաքսիլի առաջարկած համակարգը հիմնովին տարբերվում է Տ.Լ.Կարլի և Ֆ.Շմիտերի համակարգերից: Քննելով «ներքնից պարտադրված անցումները», որոնք, մեր կարծիքով, որոշակի առավելություններ ունեին ժողովրդավարական անցման սկզբնական շրջանում, Մ.Մաքսիլը չի վերլուծում անցման ձևերի բազմազանությունը, որը կատարել են Տ.Լ.Կարլը և Ֆ.Շմիտերը: Փաստորեն, վերջիններս, հանրագումարելով XX դարի 50-ականներից մեկնարկած քաղաքական արդիականացման գործընթացը, որը ենթադրում է ժողովրդավարական անցում, սուս կարևորել են անցման ձևերը: Մինչդեռ, Մ.Մաքսիլի դասակարգման մեջ տիպավորված են այն արդյունքները, որոնք առաջանում են առաջին ընտրություններից հետո (անկախ այն բանից, դրանք «սահմանադիր» են, թե ոչ), և, այս արդյունքներից դատելով, վերոհիշյալ հեղինակը գնահատում է սովյալ պահին գոյություն ունեցող իշխանական հարաբերությունները, երբ նախաձեռնություն է սկսվել (կամ չի սկսվել) վարչակարգային փոփոխություններ կատարելու համար: Ի տարբերություն Մ.Մաքսիլի՝ Տ.Լ.Կարլը և Ֆ.Շմիտերը փորձում են վերլուծել և հասկանալ բոլոր այն որոշումների, գործողությունների կամ ուժային հարաբերությունների հաջորդականությունը, որոնք ուղեկցվում են ազատականացմամբ և վարչակարգային ներուժի փոփոխությունների սկիզբ են հանդիսանում:

Այս համատեքստում, ժողովրդավարական անցման գործընթացում ծագած անորոշության գործոնների բազմազանությունը հաշվի առնելով, ոչ մի հիմք չկա ակնկալելու, որ կատարված ընտրությունը կհանգեցնի սպասվող արդյունքների: «Դերակատարները (հիմնականում պետական դիրք զբաղեցնողները) հակված են գերազնահատելու սեփական համբավը և թերագնահատելու իրենց հակառակորդների մոբիլիզացիոն ներուժը և այդ պատճառով էլ «իրատեսորեն» պարտադրում են խաղի այնպիսի կանոններ

կամ գնում են այնպիսի փոխզիջումների, որոնք էլ, ի վերջո, ջախջախում են նրանց» [2, շ. 15]: Դիտարկումները թույլ են տալիս եզրակացնել, որ այս օրինաչափությունն առավել հստակ դրսևորվում է հետկոմունիստական երկրների ընտրազանգվածի վարքաբանությունում: Շատ դեպքերում դերակատարները չեն կարողանում հաշվարկել ապագա ընտրությունների արդյունքները, նույնիսկ այն դեպքում, եթե ճշգրիտ հաշվարկել են իրենց ընտրազանգվածային հնարավորությունները: Արդյունքում՝ մրցակցող ուժերի հարաբերակցությունը հենց ընտրությունների ընթացքում էլ կարող է փոխվել: Ըստ էության՝ Մ.Մաքֆոլն իր դասակարգման մեջ ոչ միայն ներմուծում է Տ.Լ.Կարլի և Ֆ.Շմիտերի դասակարգումից տարբերվող փոփոխական, այլ առաջ է քաշում սկզբունքորեն այլ վարկած: Համաձայն նրա՝ հետկոմունիստական երկրներում, ի հակակշիռ Լատինական Ամերիկայի և Հարավային Եվրոպայի երկրների, առավել մեծ տարածում են ստացել ոչ թե «պակտային» կամ «թելադրված» անցումները, այլ «բարեփոխականը»՝ նախաձեռնված ներքնից, որոնք էլ ամենահաջողվածներն են: Ըստ էության, Մ.Մաքֆոլը վերադարձ է կատարել ժողովրդավարացման նախկին «պահպանողական» տեսությանը, որը հիմնականում, հենվելով մեծ կերպափոխություններ առաջացրած հեղափոխությունների պատմական փորձի վրա, դիտարկում է ժողովրդավարությունը և հետագա զարգացումը՝ քաղաքական գործընթացներից դուրս մնացած՝ անջատված, հեղափոխականացված խմբերի միջոցով: Այստեղ հատկապես կարևորված է վերջիններիս ընդունակությունը՝ աստիճանաբար համախմբվելով քաղաքական գործընթացներ ներթափանցել և պայքար մղել ժողովրդավարական արժեքների համար: Ակնհայտ է, որ Մ.Մաքֆոլի վարկածը ժողովրդավարական անցման գործընթացում գտնվող երկրներին պահում է հեղափոխականացված վիճակում, որը, մեր կարծիքով, չնպաստելով քաղաքական կայունացմանը, միաժամանակ հնարավորություն չի տալիս ժողովրդավարացումը դիտարկել համակարգված ամբողջության մեջ: Համաձայնելով Տ.Լ. Կարլի և Ֆ.Շմիտերի հետ, որոնք չեն ընդունում Մ.Մաքֆոլի վարկածը, նշենք, որ մեր գնահատմամբ հետկոմունիստական անցումների մեծամասնությունը «թելադրված» էր վերնից, սակայն, չբացառելով հանդերձ, որ անցման գործընթացը մի քանի երկրներում «թելադրված» է եղել նաև ներքնից, առաջարկում ենք նկատի ունենալ, որ ներկայացված դասակարգումները ենթադրում են տարաբնույթ քաղաքական զարգացումներ: Եթե ընդունելու լինենք Տ.Լ.Կարլի և Ֆ.Շմիտերի անցման ձևերի դասակարգումը, ապա Մ.Մաքֆոլի բացահայտած համահարաբերակցություններն անհետանում են, որովհետև, ըստ «Ազատության տան», ժողովրդավարական կերպափոխումների կամ տնտեսական բարեփոխումների խորության առումով, Հայաստանը, Խորվաթիան, Չեխիան և

Մլովակիան, Վրաստանը և Լիտվան արմատապես չեն տարբերվում Բուլղարիայից, Հունգարիայից, Լեհաստանից, Մոլդովայից կամ Մոնղոլիայից [4]: Էական և սկզբունքային տարբերությունները, որոնք բացահայտվում են ժողովրդավարական անցման գործընթացում գտնվող Հարավի և Արևելքի միջև, իրականում մի կողմից՝ պայմանավորված են «պակտային» և «բարեփոխական» գործընթացներով և մյուս կողմից՝ «թելադրված» անցումների միջև գոյություն ունեցող տարբերություններով: Հայտնի են դեպքեր, երբ Հարավի նախկին վարչակարգերի որոշ ներկայացուցիչներ հաջողությամբ դեկավարել են իրենց երկրների շարժումը դեպի ժողովրդավարություն: Այս համատեքստում Լատինական Ամերիկայում ուշադրության են արժանի Բրազիլիան և Մեքսիկան, իսկ Ասիայում՝ Թայվանը և Թաիլանդը: Վարչակարգային փոփոխություններն այս երկրներում տևել են բավական երկար, ընթացել դանդաղ, սակայն նրանց ինստիտուցիոնալ արդյունքներն այսօր ակնհայտ են: Հանրագումարելով վերոհիշյալ երկրների ժողովրդավարական անցման փորձը՝ Տ.Լ.Կարլը և Ֆ.Շմիտերը, կարևորելով ժամանակի գործոնը, գրում են. «ԿԱԵ և ՆԽՄ երկրների՝ Ալբանիա, Ադրբեջան, Բելառուս, Էստոնիա, Լիտվա, Մակեդոնիա, Ռումինիա, Ռուսաստան, Սերբիա, Մլովենիա և Ուկրաինա, ժողովրդավարական ձեռքբերումներն առավել քիչ տեսանելի են (իսկ երբեմն էլ՝ կասկածելի), բայց պետք է նշել, որ վերոհիշյալ պետություններից ոչ մեկը, բացառությամբ, երևի, Սերբիայից, չեն վերադարձել (դեռևս) մենիշխանության նախկին ձև հիշեցնող ինչ-որ վիճակի, և դրանք բոլորը, բացի Ադրբեջանից, շարժվում են (թող որ միշտ հետևողականորեն) դեպի ժողովրդավարության համախմբում» [2, c. 16]:

4. «Անցում-համախմբում» պարադիգմի ազդեցությունն անցման ձևի վրա. ժողովրդավարության որակ

Հետանցումային իրողությունների իրատես իմաստավորման համար Ֆ.Շմիտերը մեծ ուշադրություն է հատկացնում «ժողովրդավարության որակի» ուսումնասիրմանը՝ սերտորեն կապված «համախմբում» հասկացության հետ [14]: Հետկոմունիստական երկրների փորձը հանրագումարելով՝ նա խոստովանում է, որ այս հասկացությունն օգտագործվում է այնքան տարբեր իմաստներով և այնպիսի տարբեր խնդիրների լուծման ժամանակ, որ կորցրել է (եթե, իհարկե, երբևէ ունեցել է) իր հայեցակարգային հատկության մեծ մասը: Սակայն ակնհայտ է, որ ժողովրդավարական համախմբում հասկացությունը կարելի է դիտարկել որպես ժողովրդավարական վարչակարգի գոյության տևողության և կայունության չափորոշիչ: Այնուհանդերձ, այս պարագայում գերակա է այն հարցը, *թե ինչու որոշ ժողովրդավարություններ ավելի կայուն են (կամ ավելի երկար են պահպանվում), քան*

մյուսները: Հանրագումարելով հետկոմունիստական երկրների փորձը՝ կարող ենք ասել, որ «անցում–համախմբում» պարադիգմի կիրառման համար հարկավոր են հասարակական–քաղաքական այլ իրողություններ, քան անցումը սկսելու համար: Սակայն այս գործընթացի բազմաչափությունը թույլ է տալիս ասել, որ անցման պայմաններում մի դեպքում ժողովրդավարության ապակայունացումն առաջանում է քաղաքական կուսակցությունների կամ քաղաքացիական հասարակության որակից, մյուս դեպքում որոշիչ են համարվում նոր ազատական տնտեսական բարեփոխումները, որոնց հետևողական իրականացումը կարող է դրական (կամ բացասական) ազդեցություն ունենալ ժողովրդավարության կայունության վրա: Եվ վերջապես՝ ժողովրդավարությունը կարող է անհետանալ, եթե անհավասարությունը չափազանց մեծ է, իսկ ժողովրդավարության պահպանման հնարավորություններն ընկած են պետության վրա: *Այս բազմազանությունն անընդհատ նոր անորոշություն է ստեղծում ժողովրդավարական անցման մոդելը որպես համակարգային ամբողջություն դիտարկելու առումով*: Մեր կարծիքով, եթե նոր ժողովրդավարությունների իրատես գնահատման նպատակով հիմնվենք տնտեսական զարգացման մակարդակի՝ որպես ժողովրդավարության կայունության հիմնական բանաձևի վրա, ապա հնարավորություն ենք ստանում դիտարկել այնպիսի ցուցանիշ, ինչպիսին «*ժողովրդավարության որակն*» է:

Ժողովրդավարական անցումների տեսաբանները լրջորեն չեն ուսումնասիրել «*ժողովրդավարության որակի*» հիմնահարցը, գուցե այն պատճառով, որ համաձայն են Մ.Մաքսիմովի այն կարծիքին, թե հետկոմունիստական տարածքներում անցման գործընթացում պետք է գերակայի «*հեղափոխությունը ներքևից*»: Մինչդեռ հետկոմունիստական երկրները պետք է ժողովրդավարության համախմբման փուլ անցնեն, և դրանից հետո միայն կարելի է դատողություններ անել նման արդյունքների հանգեցրած այն պայմանների մասին, որոնք ձևավորել են ժողովրդավարությունների առկա որակը: Ակնհայտ է, որ հետկոմունիստական երկրները հասել են համախմբման որոշակի մակարդակի, այդ պատճառով էլ կարելի է գնահատել այն, ինչը վերջնական արդյունքում ստացվել է, և ոչ թե պլանավորել նոր անցում, ինչպես կարծում է Մ.Մաքսիմովը՝ «*հեղափոխություն ներքևից*»: Փաստ է, որ հետկոմունիստական երկրներում վարչակարգային փոփոխություններն ավարտվել են, և ոչ հետ անցնելու, ոչ էլ երկրորդ հեղափոխական անցման անհրաժեշտություն չկա: Իսկ հետագա ինստիտուցիոնալ և վարքաբանական տեղաշարժերը, թվում է, կրելու են արդեն «*ներժողովրդավարական*» բնույթ, այսինքն՝ ենթադրվում է անցում ժողովրդավարության մի ձևից մյուսին: Այս մտտեցման օգնությամբ հետկոմունիստական

տարածքներում հնարավոր է բացահայտել «ժողովրդավարության որակի» բարձրացման խնդիրը, որը, մեր համոզմամբ, հնարավոր է դիտարկել որպես ժողովրդավարացման նոր ալիք: Այս ամենն էլ հնարավորություն կտա հետևյալում հաստատել երկրներին դուրս գալ Մ.Հանթինգթոնի ժողովրդավարացման «երրորդ ալիքի» շրջանակներում ձևավորված ժողովրդավարական անցման մեթոդաբանական, խորհրդանշանային, քաղաքակրթական և վարքաբանական սարդոստայնից: Ակնհայտ է, որ «նոր ժողովրդավարությունները» անհրաժեշտ է գնահատել եզակի չափանիշներով, ընդ որում՝ դրանք պետք է բխեն «իրական, ձեռքբերելի» և ոչ թե «իդեալական» նորմերից, որոնք իրականացնելու համար նույնիսկ ամենազարգացած ժողովրդավար երկրներում անգամ դարեր են անհրաժեշտ եղել: Այլ կերպ ասած՝ ժողովրդավարական անցման պայմաններում հավասար իրավունքներով օժտված քաղաքացիները կարող են տիրապետել ոչ հավասար ռեսուրսների կամ իշխանություն ներթափանցելու հնարավորության. ոչ միշտ է հաջողվում երկրի ամբողջ տարածքում և սոցիալական ենթակառուցվածքների բոլոր մակարդակներում ապահովել կամ լիովին պահպանել սահմանադրական երաշխիքները: Եկամուտների, կյանքի որակի և մակարդակների տարբերությունները կարող են լինել այնքան նշանակալի, որ երկրի միջին ցուցանիշները կարող են չարտացոլել իրերի իրական վիճակը: Քաղաքական այն «բարիքների» տնօրինումը, որը քաղաքացուն հնարավորություն է ընձեռում ընտրանի «մուտքագրվել», կարող է լինել անձնական, ընտանեկան կամ կլանային կապերի արդյունք: Քանի որ, անդամագրվելով քաղաքական միություններին, շարժումներին և կուսակցություններին, քաղաքական նոր իրողություններում հայտնված ոչ բոլոր քաղաքացիներն են գիտակցված մասնակցություն ունենում քաղաքական գործընթացներին: Բնականաբար, նոր հարց է առաջանում. այս ամենը ենթադրո՞ւմ է ժողովրդավարացման նոր ալիք, թե՞ ոչ: Այս հարցին Մ.Մաքֆոլը մեր կողմից դիտարկվող իր մենագրությունում առաջադրում է «ժողովրդավարացման չորրորդ ալիք» հասկացությունը: Չցանկանալով արմատապես ընդդիմանալ Մ.Մաքֆոլին՝ նշենք միայն, որ նրա կողմից «բացահայտված» ժողովրդավարացման նոր «չորրորդ ալիքի» մասին խոսում են նաև Տ.Լ.Կարլը և Ֆ.Շմիտերը: Ակնհայտ է, որ Մ.Մաքֆոլը հենվում է Մ.Հանթինգթոնի «երրորդ ալիքի» հայեցակարգի վրա: Մակայն մաքֆոլյան դրույթի հայեցակարգային անկատարելությունն այն է, որ ալիքների փոխհարաբերություններն ինչ-որ իմաստ են ստանում միայն այն պարագայում, երբ ընդհանրապես սեղմում են ժամանակը:

Հետևյալում հաստատելու անցումները որպես «ժողովրդավարացման հատուկ ալիք» դիտարկելով՝ Մ.Մաքֆոլը գտնում է, որ այս անցումը հեղափո-

խական բնույթ ունի, քանի որ Եվրոպայի հարավում և Լատինական Ամերիկայում, իբր, դրանք բնականոն զարգացող էին: Հետևումունիստական երկրներում իրականացված կերպափոխումների նման ընդհանրացումը Հարավային Եվրոպայի և Լատինական Ամերիկայի վարչակարգային փոփոխություններին դրանց հակադրումը և՛ տեսական, և՛ փորձնական առումով մեզ սխալ է թվում: Չնայած փոփոխությունների լայնամասշտաբ լինելուն՝ իրավիճակների միջև ենթադրվող նմանությունն օրինաչափ չէ: Խոսքը վերաբերում է ոչ միայն ազատական գաղափարների թույլ տարածվածությանը կամ բռնության դեպքերի (այդ թվում՝ սեփականության իրավունքի ոտնահարման) և մոբիլիզացման ընդլայնման հարաբերական սակավությանը, այլ նաև նրան, որ հին կոմունիստական վարչակարգի կողմնակիցներից շատերը մնացել են իրենց երկրներում՝ պահպանելով զգալի նյութական և քաղաքական ռեսուրսներ: Ժողովրդավարության փորձը թույլ է տալիս հանգել հետևյալ եզրակացությանը. «խական» հեղափոխությունից հետո նման իրողություն բացարձակապես անհնար է, քանի որ դրա ավարտի ժամանակ դերակատարները կամ զրկվում են իրենց կարողությունից, կամ ամբողջովին հեղինակազրկվում, կամ էլ նույնիսկ սպանվում ու արտաքսվում: Մինչդեռ հետևումունիստական տարածքի երկրներում բոլորովին այլ իրավիճակ ստեղծվեց: Այդ երկրներից շատերում «դիմակայության» ընթացքում պարտություն կրած ուժերը շուտով կարողացան իշխանության վերադառնալ՝ օգտվելով իրենց հայեցողության տակ եղած ռեսուրսներից (անձնական և մեկուսախմբային): Եթե քննարկվող տարածաշրջանում իսկապես տեղի են ունեցել հեղափոխություններ, ապա դրանք ավելի շատ եղել են հեղափոխություններ «վերևից» կամ «դրսից», քան «ներքևից»:

Մեր այս եզրակացությունը լիովին ներառվում է ժողովրդավարական անցման ընդհանուր մոդելի մեջ: Ժամանակին Տ.Լ.Կարլը և Ֆ.Շմիտերը, Օ'Դոնելի հետ համատեղ համեմատելով ժողովրդավարական անցման մոդելը, եկան այն եզրակացության, որ լատինաամերիկյան և հարավեվրոպական «չընդունված» անցումների սկզբունքներից մեկը բուրժուազիայի սեփականության իրավունքի անվիճարկելիությունն է: Իսկ ինչ վերաբերում է հետևումունիստական երկրներին, ապա այստեղ, որոշակի բացառություններով, գործեց մասնավոր սեփականության նկատմամբ պարտկրատիկ նոմենկլատուրային ընտրանու ոտնձգության անվիճարկելիության սկզբունքը: Վերոնշյալով պայմանավորված՝ կարելի է առաջ քաշել նոր վարկած, որն էլ ավելի է հակադրվում արմատավորված պատկերացումներին: Ինչպես արդեն նշվել է, «արևելաեվրոպական բացառիկության» հիմնական փաստարկ է հանդիսանում թեզն այն մասին, թե, իբր, հետևումունիստական երկրներում ավելի դժվար է փոխել վարչակարգը, և, իր հերթին,

այս թեզը կառուցվում է միաժամանակյա ձևափոխումների կանխադրույթի վրա (*simultaneity*): Ընդունված է համարել, որ «եռաչափ» կամ «քառաչափ» անցում-կերպափոխման ժամանակ ավելի դժվար է հասնել կայուն արդյունքի, մանավանդ՝ ժողովրդավարական: Իսկ եթե կերպափոխությունների միաժամանակությունը դիտարկենք ոչ թե որպես թերություն, այլ առավելություն, ապա խնդիրների զուգահեռ լուծումը, որ կապված է տնտեսավարման ազատ շուկայական համակարգին անցման, ժողովրդավարական կարգերի հաստատման և նոր միջազգային կարգավիճակի ձևավորման հետ, բերում է հնարավորությունների առավել լայն կտրվածք, քան սովորական «էվոլյուցիոն» անցումը: Հեշտանում է հակամարտող կողմերի (ինչպես կառավարող ընտրանու, այնպես էլ ընդդիմության) միջև բարիքների հնարավոր բաշխման հետ կապված սակարկությունը: Այս առումով անհրաժեշտ է կարևորել հատկապես «եռաչափ» անցումները, որոնց դեպքում պահանջվում է միաժամանակ լուծել **և՛ սեփականության լեզիտիմության, և՛ ազգային նույնականության, և՛ պետական սահմանների խնդիրը:**

Ժողովրդավարական անցման «եռաչափության» շնորհիվ կառավարող վարչակարգի միջազգային կապեր և կառավարման փորձ ունեցող ներկայացուցիչները, նոր հնարավորություններ ստանալով, պատրաստ են մոռանալ քաղաքական գերիշխանության իրենց ձգտումները, որպեսզի ձեռք բերեն կապիտալ և կարգավիճակ: Հետևում են իստական հանրապետություններում նման համագործակցությունը ձեռք է բերվել ոչ ֆորմալ միջոցներով՝ ենթադրելով, որ հաղթողները կհրաժարվեն հետահայաց արդարադատությունից և կասկածի տակ չեն դնի պարտվողների իրավունքները սեփականության նկատմամբ:

Ակնհայտ է, որ այս ամենը հնարավոր էր միայն գաղտնի «պակտի» շնորհիվ: Ավելին, նախկին կոմունիստները ոչ միայն հայտնվեցին անհատապես լավ պաշտպանված վիճակում, այլև կարողացան զարմանալիորեն շատ արագ վերադառնալ իշխանության՝ թեկուզ «բարեփոխված վիճակում»: Շատ ժամանակ չպահանջվեց, որպեսզի հետևում են իստական երկրների մեծամասնության մեջ նրանք դառնային ժողովրդավարապես ընտրված կառավարություններ: Այս իմաստով ուշագրավ են ՀՀ հարևան Ադրբեջանի և Վրաստանի օրինակները: Մեր կարծիքով՝ Հարավային Կովկասի երկրների ժողովրդավարական անցման գործընթացում, թերևս, բացառություն է ՀՀ-ն, մեկն այն հետևում են իստական երկրներից, որտեղ հին վարչակարգը խարխլվեց «ներքևից»՝ լայն մոբիլիզացիայի արդյունքում: «Նոր ժողովրդավար» առաջնորդները, ինչպես մեզ թվում է, փորձեցին ձեռքազատվել (*defenestrate*) պարտկրատիկ-նոմենկլատուրայի բարձրաստիճան բոլոր ներկայացուցիչներից և նույնիսկ հիմնել սեփականության նոր հա-

րաբերություններ՝ վաուչերային սեփականության միջոցով, դրանով իսկ փորձելով նվազագույնի հասցնել նրանց դերը տնտեսության մեջ: Դատելով ստացված արդյունքներից՝ «նոր ժողովրդավարների» այս ջանքերը ՀՀ-ում հաջողությամբ չպսակվեցին, բայց միևնույն է, ՀՀ-ն հետևումունիստական այն երկրների թվին է պատկանում, որտեղ նախկին կոմունիստական կուսակցությունն էական դեր չխաղաց:

Ամփոփենք. ԽՍՀՄ փլուզումից հետո նոր անկախացած հանրապետություններում հաստատվել է մենիշխանության մի յուրահատուկ տեսակ, տնտեսական մի համակարգ, որը չունի իր նախատիպն աշխարհում: Բայց միաժամանակ նոր ժողովրդավարությունները ստիպված են հաղթահարել անցյալի ժառանգությունը և պայքարել քաղաքական զարգացման ճգնաժամերի դեմ՝ ժողովրդավարական քաղաքական համակարգի կայացման ակնկալիքով: Հենց այս ամենն էլ նկատի ունենալով՝ պնդում ենք, որ ժողովրդավարական անցման պայմաններում գտնվող երկրների միջև նմանությունն այնքան մեծ է, որ կարելի է հիմնավորել աշխարհի բոլոր տարածաշրջանների ուսումնասիրության ժամանակ կուտակված ողջ փորձը և ձևավորված օրինաչափությունների օգնությամբ համակարգել նրանց անցած ուղին՝ հանուն ժողովրդավարության որակի:

Հունվար-մարտ, 2006թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Сморгунов Л.В.*, Сравнительная политология: теория и методология измерения демократии. СПб., 1999.
2. *Карл Т.Л., Шмиттер Ф.*, Демократизация: концепты, постулаты, гипотезы, 2004, № 4.
3. *McFaul*, The Fourth Wave of Democracy and Dictatorship. Paper prepared for the Annual Meeting of the American Political Science Association. San Francisco, 2001.
4. Freedom House. Report Karatnycky A., Motyl A., Schnitzer a. (eds.). Nations in Transit. Civil Society, Democracy and Markets in East Central Europe and the Newly Independent States, New Brunswick, 2003.
5. *O'Donnell G., Schmitter Ph., and Whitehead L.* (eds), Transitions from Authoritarian Rule: Prospects for Democracy, 1986.
6. *Schmitter Ph.*, Interest Systems and the Consolidation of Democracies // Reexamining Democracy. Essays in Honor of Seymour Martin Lipset / Ed. by L. Diamond. Newbury Park, London, New Delhi: Sage Publications, 1992.
7. *Даль Р.*, Демократия и ее критики, М., 2003.
8. *Даймонд Л.*, Прошла ли «третья волна» демократизации? , 1999, №1.
9. *Linz J., Stepan A.*, Toward Consolidated Democracies // Journal of Democracy. 1996. Vol. 7. № 2.

10. *Karl T.L., Schmitter Ph.* Modes of Transition in Southern and Eastern Europe, Southern and Central America.- International Social Science Journal, 1991, May.
11. *Karl T.L.*, OPEC Lessons for Caspian Leaders.- Ebel. R. Menon R. (eds.). Energy, Weapons Proliferation and Conflict in Central Asia and the Caucasus, Baltimore, 2000.
12. *Diamond L., Linz J.J., Lipset S.M.* (eds.). Democracy in Developing Countries. Boulder, 1986.
13. *Linz J.J., Stepan A.*, Problems of Democratic Transition and Consolidation: Southern Europe, Southern America and Post communist Europe. Baltimore, 1994. *Munck G.L., Leff C.S.*, Modes of Transition and Democratization: South America and Eastern Europe in Comparative Perspective.-Comparative Politics, vol. 29, №3, 1997.
14. *Schmitter Ph.*, From an Iron Curtain of Coercion to a Paper Curtain of Concepts: Grounding Transitologist or Confining Students of Postcommunism?- Slavic Review, vol 54, № 4, 1995.

КОНСОЛИДАЦИЯ ДЕМОКРАТИИ КАК ГАРАНТ СОСТОЯТЕЛЬНОСТИ МОДЕЛИ ДЕМОКРАТИЧЕСКОГО ТРАНЗИТА

Мариам Маргарян

Резюме

Подытоживая опыт демократического транзита 50-60-х гг. XX столетия в странах Африки и Латинской Америки, транзитологи признаются, что эти страны находятся в стадии «зависимого развития», что свидетельствует о неэффективности процессов становления новых демократических режимов. Поэтому необходимо разработать новые теоретические положения демократического транзита как модели политического развития. Очевидно, что процесс демократического транзита является разнообразным и разноуровневым, что дает возможность, рассматривая транзитологические модели середины XX века, приводить против них весомые аргументы, принимая во внимание тот факт, что под *транзитом следует понимать не переход от тоталитаризма к авторитаризму (как было вначале), а переход к демократии*. В этом смысле демократическая консолидация является процессом обоснования новых либеральных отношений – не только в смысле субъективного восприятия ценностей и норм, но и дальнейшего естественного развития демократических институтов.

Для изучения логики парадигмы «транзит-консолидация» необходимо выяснить «условие транзита». Здесь надо различать демократический транзит и консолидацию. В процессе транзита образуются новые институты, которые

работают и взаимодействуют согласно новым правилам игры, тогда как консолидация требует институционализации новых норм и структур режима, расширения легитимности и устранения трудностей, препятствующих деятельности учрежденных на начальных этапах институтов. Процесс демократической консолидации включает четыре направления: 1) быстро ограничить, минимизировать или связать свои идеологические и институциональные несоответствия; 2) утвердить свой суверенитет относительно старых властей и, особенно, вооруженных сил; 3) мобилизовать гражданское общество с его формами выражения; 4) развить ответственную перед народом, относительно стабильную партийную систему, способную образовать правительство.

В этом процессе решающим является трансформация политической культуры, которая предполагает переход от «инструментальных» положений демократии к «принципиальным», т.е. демократия в этом случае становится ценностью, формируя цивилиархическую культуру. По нашему убеждению, вопрос, который должен интересовать специалистов, занимающихся посткоммунистическими транзитами, состоит в том, почему так много посткоммунистических стран стали не только носителями «ущербных» демократий, но и в процессе борьбы с авторитаризмом пришли к «цветным революциям». В парадигме «транзита-консолидации» смена режима должна рассматриваться как отдельная предметная область, т.е. в любом случае предусматривающую консолидацию смену режима сегодня следует интерпретировать как относительно самостоятельный этап политического развития «новых демократических» стран.

Учет социально- и этнополитических особенностей парадигмы «транзита-консолидации» невозможно систематизировать в *некоторую общую группу инфраструктур, что необходимо для перехода от авторитарной системы и что может объяснить этот переход*. Тем не менее, существуют структурные условия, которые помогают понять, почему в той или иной стране сформировалась качественная демократия, которая выделяется *жизнеспособностью социального сообщества и стабильностью политического порядка*.

Таким образом, *демократический транзит является не процессом развития по единственному пути, а системой альтернативных путей развития, при помощи которой вырисовывается программа демократической консолидации. При изучении этих путей необходимо учитывать два фактора: 1) стратегия элиты и масс; 2) существующее соотношение сил между правящими группами и их противниками*. В этом контексте необходимо выделить «трехмерные» переходы, при которых требуется одновременно решить *задачи легитимности собственности, национальной идентичности и государственных границ*.